Հաստատում եմ՝

<<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ

տնօրեն

Բաբիկ Մանտաշյան

«26» դեկտեմբերի 2018թ.

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ր Ծ Ր Ա Գ Ի Ր

«Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ

ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Արթիկ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.1.1. Լրիվ անվանումը <<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ

1.1.2. Կազմակերպաիրավական ձևը Փակ բաժնետիրական ընկերություն

1.1.3. Սեփականության վկայականի գրանցման համարը N-16062014-08-0027/

1.4. Գրանցման վայրը և տարեթիվը Շիրակի մարզ, ք. Արթիկ, Բաղրամյան 2/8, 2007թ.

1.1.5. Գործունեության իրականացման վայրը Շիրակի մարզ, ք. Արթիկ, Բաղրամյան 2/8

1.1.6. Փոստային հասցեն (գործունեության վայրը) Շիրակի մարզ, ք. Արթիկ, Բաղրամյան 2/8

1.1.7. Պետական մասնակցության (բաժնեմասի) չափը 100 տոկոս

1.1.8. Կանոնադրական կապիտալի չափը 40467,0 հազ.դրամ

1.1.9. Բաժնետոմսերի քանակը 650հատ

(բաժնետոմսերի անվանական արժեքը 62,257 հազ.դրամ),

այդ թվում հասարակ բաժնետոմս- 650, արտոնյալ բաժնետոմս-0:

1.1.10. Սեփականության վկայականում նշված անշարժ գույքի, այդ թվում հողամասի մակերեսը՝ _____

Շենքեր, շինություններ՝ 3093,5 քառ.մետր,

հողամաս՝ 0,2537 հա

1.1.11. Նույնականացման ծածկագիրը 39233275

հարկ վճարողի հաշվառման համարը 06107489

1.1.12. Հեռախոս 0244-55241

1.1.13. Ֆաքս _____

1.1.14. E-mail artiki-bk@mail.ru

1.1.15. Վեբ-կայքը (առկայության դեպքում) _____

Գլխավոր տնօրեն՝ Բաբիկ Մարտիրոսյան հեռ. 098-799995

Գլխավոր հաշվապահ՝ Մարինե Խաչատրյան հեռ. 094-821520

1.2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (ՏԵՂԵԿԱՆՔԸ) ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.2.1. Կազմակերպության ստեղծման տարեթիվը

Ընկերությունը ստեղծվել է 2007թ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահական համակարգի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1911-Ն որոշման համաձայն «Արթիկի հիվանդանոց» և «Արթիկի պոլիկլինիկա» ՓԲԸ-ների միաձուլման միջոցով վերակազմակերպման արդյունքում:

Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, իրավական ակտերով, ինչպես նաև կանոնադրության հիման վրա, ըստ որի ընկերության հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինն է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետը:

1.2.2. Կազմակերպության ստեղծման նպատակը

«Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նպատակը ազգաբնակչությանը որակյալ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելն է:

1.2.3. Կազմակերպության կողմից լուծվող խնդիրները

Ընկերությունը պետության կողմից տրամադրված սահմանափակ բյուջեի և վճարովի ծառայություններից ստացված միջոցների շրջանակներում հնարավորինս լուծում է բնակչության առողջության առաջնային պահպանման խնդիրները՝ կանխարգելիչ, ախտորոշիչ, բուժական, ինչպես նաև պատշաճ մակարդակի հիվանդանոցային բուժսպասարկման իրականացման խնդիրը:

1.2.4. Կազմակերպության գործարար ծրագրի ժամանակահատվածին նախորդ 3 տարիների գործունեության ցուցանիշների մասին:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

հազ.դրամ

N	Ցուցանիշի անվանումը	2016	2017	2018	Աճման տոկոսը եռամյա ծրագրի առաջին տարվա նկատմամբ
1	2	3	4	5	6

1. Համախառն արտադրանքի ծավալը	234157.2	228456.6	239600.0	2.0
2. Իրացման ծավալը	233853.3	228188.4	239400.0	2.3
3. Շահույթի մեծությունը	303.9	268.2	200.0	-34.0
4. Ակտիվների մեծությունը	135838.5	161768.2	252073.0	85.5
5. Շահութաբերությունն ըստ ակտիվների	0.22	0.17	0.079	
6. Շահութաբերությունն ըստ իրացման ծավալների	0.13	0.12	0.083	
7. ՀՀ պետական և տեղական բյուջեներ վճարված հարկերի ծավալը	51727.3	52157.8	52104.0	0.7
այդ թվում՝ ըստ հարկատեսակների	216,2	268,2	240,0	
1) Շահութահարկ	49484,4	47995,5	47905,0	
2)Եկամտային հարկ	61,5	63,0	65,0	
3)ԱԱՀ	270,0	205,0	324,8	
4)Գույքահարկ	3,0	3,0	3,0	
5) Հողի հարկ	139,8	158,1	152,5	
6) Բնավճար	673,7	672,1	655,7	
7)Արտոնագրային վճար	110,	110,0	110,0	
8)Պետ տուրք	765,0	904,8	1141,0	
9)Սոց. Վճար	0	1779,0	1507,0	
10)Դրոշմանիշային վճար				
8. ՀՀ պետական բյուջե վճարված շահութաբաժինների ծավալը	78,0	44,5	888,5	

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության ոլորտը (ները)

Ընկերությունը, հանդիսանալով առողջապահական կազմակերպություն, իր գործունեությունն իրականացնում է **առողջապահական ոլորտում:**

2.2. Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները

<<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի գործունեության հիմնական ուղղություններն **են՝**

1.Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություն

2. Հիվանդանոցային ծառայություն

3. Շտապ բուժօգնության ծառայություն

Ընկերությունը, հանդիսանալով առողջապահական կազմակերպություն, կատարում է պետության կողմից երաշխավորված և վճարովի որակյալ, արդյունավետ և ՊԱԳ-ի կողմից վերահսկվող բժշկական օգնություն և սպասարկում:

Բուժհաստատության կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները պետք է միտված լինեն բուժհաստատության ներքին կառուցվածքի զարգացմանը, վճարովի ծառայությունների ծավալի աճին, բուժօգնության որակի և սպասարկման կառավարման բարելավմանը, ինչպես նաև ֆինանսական մուտքերի ավելացմանը, դրանց թափանցելիությանը և վերահսկմանը:

2.3. Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունները և դրանց ընդհանուր բնութագիրը

. Ընկերության գործունեության հիմնական տեսակն է բուժօգնությունը և սպասարկումը, որն իր մեջ ներառում է՝

ա/ հիվանդանոցային ծառայությունը՝ ընդամենը 25 մահճակալ, որից

- Վիրաբուժական՝ 15 մահճակալ
- թերապևտիկ՝ 5 մահճակալ
- ինֆեկցիոն՝ 5 մահճակալ

բ/ արտահիվանդանոցային ծառայությունը

- ընտանեկան բժշկության կաբինետներ
- մանկաբույժի կաբինետ
- նեղ մասնագիտական կաբինետներ՝ վիրաբուժական, ակնաբուժական, ներզատաբանական, ինֆեկցիոն, սրտաբանական, նյարդաբանական, քիթ-կոկորդ-ականջաբանական
- ստոմատոլոգիական ծառայություն
- դիսպանսեր կաբինետներ՝ հակատուբերկուլյոզային, հոգեբուժական, մաշկավեներաբանական, ուռուցքաբանական

Գյուղական բուժամանկաբարձական կետեր

- Սարալանջի ԲՄԿ
- Նահապետավանի ԲՄԿ
- Հառիճի ԲՄԿ

գ/ ՇԲՕ ծառայությունը

դ/ Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծառայությունները

- կլինիկական լաբորատորիա
- ֆիզիոթերապևտիկ կաբինետ
- ռենտգենոգրաֆիա
- ֆլյուորոգրաֆիա
- սոնոգրաֆիա
- ԷԿԳ

Ընկերությունը կատարում է պետության կողմից երաշխավորված որակյալ, արդյունավետ և վերահկվող բժշկական օգնություն հետևյալ ծրագրերով՝

1. Ընտանեկան բժիշկների կողմից բուժօգնություն և սպասարկում
2. Երեխաների բժշկական օգնություն և սպասարկում դպրոցներում
3. Դեռահասների բժշկի կողմից առողջության առաջնային պահպանման ծառայություն

4. Անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրում
5. Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձ. և բուժում
6. Նեղ մասնագիտացված բժշկական օգնության
7. Հարակից բժշկական ծառայություններ/լաբորատոր գործիքային բժշկական ծառայություններ/
8. Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում
9. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոց. փաթեթի ծրագրի շրջանակում բուժօգնության ապահովում
10. Վճարովի հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական ծառայություններ
11. Ստոմատոլոգիական բուժ սպասարկում
12. Անհետաձգելի բուժօգնության ծառայություններ
13. Հին ծառայողների,ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնություն
14. Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդկրգվածների բժշկական օգնություն
15. Շտապ բժշկական օգնության ծառայություններ
16. Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

3.2. Ծառայություններից օգտվողների նկարագրությունը

Ընկերության մատուցած բուժօգնությունից օգտվում են Արթիկ քաղաքի և տարածաշրջանի 23 գյուղերի ազգաբնակչությունը, իսկ ստացիոնար ծառայությունից օգտվում են նաև այլ մարզերի բնակիչներ:

Շենքային պայմանների բարելավման և ժամանակակից բուժսարքավորումների բավարար հագեցվածության պայմաններում ակնկալվում է, որ ծառայություններից օգտվողների , ինչպես նաև վճարովի հիվանդների զգալի աճ կդիտվի:

3.3. Մրցակիցների գնահատում

Շիրակի մարզում ընկերության հիմնական մրցակից համարվում է <<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, որն ունի անհամեմատ բարձր տեխնիկական և կադրային հագեցվածություն, բուժսպասարկման ծառայությունների առավել մեծ թվաքանակ:

3.4. Մրցակիցների նկատմամբ սեփական ուժերի և թույլ կողմերի գնահատում

Ընկերության ուժեղ կողմերից է՝ բժշկական որակյալ կադրերով հագեցվածությունը:

Թույլ կողմերից է՝ շենքային անբավարար պայմանները և ժամանակակից բուժ. սարքավորումներով ոչ բավարար հագեցվածությունը, գույքի և բուժսարքավորումների սակավությունը և ֆիզիկական մաշվածությունը:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ)

4.1. Ծառայությունների մատուցման ծրագիր ըստ եռամյա ծրագրի՝ ծրագրային յուրաքանչյուր տարվա համար և առաջին տարվա համար ըստ եռամսյակների:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

հազ. դրամ

N	Ծառայության մատուցման ծրագիրը բնութագրող ցուցանիշների անվանումը	2019	2020	2021	Այդ թվում եռամյաձրագրի առաջին տարվա համար ըստ եռամսյակների			
					1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1	Ցուցանիշները նշվում են արժեքային արտահայտությամբ, եթե հնարավոր է նաև ոչ արժեքային արտահայտությամբ (բնաիրային)	220000	230000	240000	55000	55000	55000	55000
	Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություն	140000	142000	144000	35000	35000	35000	35000
	Ստոմատոլոգիական ծառայություն	900	1000	1100	200	250	225	225
	Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ	1100	1500	1600	250	300	275	275
	Շտապ բժշկական օգնության ծառայություն	23000	24000	25000	5700	5800	5700	5800
	Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ	12000	14000	15500	3000	2500	3500	3000
	Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ	17000	18000	20000	4000	4500	4250	4250
	Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություն	2000	2500	2800	500	500	500	500
	Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություն	12000	14000	15500	3000	2500	3500	3000
	Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ	12000	13000	14500	3000	2500	3500	3000

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ, ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԸ

5.1. Կազմակերպության եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ

հազ. դրամ

N	Ցուցանիշի անվանումը	2019	2020	2021	Այդ թվում եռամյածրագրի առաջին տարվա համարըստեռամյակների			
					1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
I	Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	260500,0	275600,0	290600,0	65000,0	65200,0	65100,0	65200,0
1.1	հիմնական գործունեությանը վերաբերվող եկամուտներ (Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթ) /պ/պ/	220000	230000	240000	55000	55000	55000	55000
1.2	Գործառնական եկամուտներ /վճ./	40000	45000	50000	10000	10000	10000	10000
1.3	այլ գործունեությանը վերաբերվող եկամուտներ	500	600	600	0	200	100	200
II	Ընդամենը ծախսեր, այդ թվում՝	259000	274000	288600	64600	64700	64800	64900
2.1	Գործառնական ծախսեր	250000	264000	277600	62500	62500	62500	62500
2.2	Ֆինանսական ծախսեր	2000	2000	2000	500	500	500	500
2.3	Ընդամենը այլ ծախսեր	7000	8000	9000	1600	1700	1800	1900
III	Շահույթ (վնաս) մինչև հարկումը	1500	1600	2000	400	500	300	300
IV	Շահութահարկի գծով ծախս	300	320	400	80	100	60	60
V	Զուտ շահույթ (վնաս)	1200	1280	1600	320	400	240	240

5.2. Կազմակերպության դեբիտորական պարտքերը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԸ

հազ.դրամ

N	Դեբիտորական պարտքերը	2019	2020	2021	Աճման տոկոսը եռամյա ծրագրի առաջին տարվա նկատմամբ
1	2	3	4	5	6
	Բժշկական օգնություն և սպասարկում	8000	8500	9000	12,5

5.3. Կազմակերպության կրեդիտորական պարտքերը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԸ

հազ.դրամ

N	Կրեդիտորական պարտքերը	2019	2020	2021	Աճման տոկոսը եռամյա ծրագրի առաջին տարվա նկատմամբ
1	2	3	4	5	6
	Դեղորայք	5500	5000	4500	
	Վարկ	10625	6875	3125	
	Այլ ծառայություններ	3000	2000	1000	

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

6.1. Կազմակերպության տնտեսական գործունեության ընթացքում հիմնական ցուցանիշները:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

հազ. դրամ

N	Ցուցանիշի անվանումը	2019	2020	2021	Այդ թվում եռամյա ծրագրի առաջին տարվա համար ըստ եռամսյակների			
					1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1	Համախառն արտադրանքի մեծությունը	260500	275600	290600	65000	65200	65100	65200
2	Իրացումից հասույթը	259000	274000	288600	64600	64700	64800	64900
3	Շահույթի մեծությունը, այդ թվում նաև հիմնական	1500	1600	2000	400	500	300	300

գործունեությունից							
4 Զուտ շահույթի մեծությունը	1200	1280	1600	320	400	240	240
5 Կուտակված վնասի մեծությունը	5760	5000	4000	5760	5760	5760	5760
6 Ակտիվների մեծությունը	253000	252000	254000	253000	253000	253000	253000
7 Աշխատողների միջին ցուցակային թիվը	135	133	130	135	135	135	135

6.1.1. Համախառն արտադրանքի մեծությունը, _____
6.1.2. Իրացումից հասույթը, _____
6.1.3. Ընդամենը ծախսեր, այդ թվում նաև հիմնական գործունեությունից, _____
6.1.4. Շահույթի մեծությունը՝ այդ թվում նաև հիմնական գործունեությունից, _____
6.1.5. Զուտ շահույթի մեծությունը, _____
6.1.6. Կուտակված վնասի մեծությունը, _____
6.1.7. Ակտիվների մեծությունը, _____
6.1.8. Աշխատողների միջին ցուցակային թիվը _____ :

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

7.1. Սույն զարգացման ծրագրի շրջանակներում առաջիկա 3 տարվա ընթացքում ըստ տարիների նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

N	Միջոցառման անվանումը	Միջոցառման ժամկետը	Միջոցառման սկիզբը/ավարտը	Միջոցառման վրա կատարված ծախսերը /հազ.դրամ/		Միջոցառման բնութագիրը	Միջոցառումից ակնկալվող արդյունքը
				ընդամենը	վարկային		
1	2	3	4	5	6	7	8
	Ստացիոնար պայմաններում մատուցվող նեղ մասնագիտական ծառայությունների շրջանակի ընդլայնում	3 տարի	01.01.2019-շարունակական	Նշված միջոցառումները հնարավոր է կատարել առկա միջոցներով՝ առանց լրացուցիչ ներդրումների		Բազմապրոֆիլ մասնագիտական ծառայությունների մատուցում	Վճարովի ծառայությունների ծավալի ավելացում
	Անհետաձգելի բուժօգնության կետի ստեղծում	3 տարի	01.01.2019-շարունակական	Նշված միջոցառումները հնարավոր է կատարել բարերարների աջակցությամբ		Անհետաձգելի բուժօգնության ծառայության մատուցում	Առավել որակյալ և արդյունավետ բուժօգնության տրամադրում

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

8.1. Եռամյա ծրագրի ժամանակահատվածում հնարավոր ռիսկերի թվարկում՝

Ընկերության գործունեության ցուցանիշների վրա կարող են ազդեցություն ունենալ հետևյալ ռիսկային երևույթները.

-Բնակչության արտագաղթը,

- սոցիալական վիճակի վատթարացումը ,

Վերը նշված երևույթները կհանգեցնեն վճարովի հիվանդների թվաքանակի կրճատմանը, ինչ բացասական ազդեցություն կունենա ընկերության ֆինանսատնտեսական արդյունքների վրա:

8.2. Հնարավոր ռիսկերի մեղմացման նպատակով նախատեսվող իրականացվելիք միջոցառումներ՝

Ելնելով բուժհաստատության կառավարման բարելավման նպատակից, բուժհաստատության տնօրենի կողմից ՀՀ Շիրակի մարզպետին և համապատասխան կառույցներին պարբերաբար պետք է ներկայացվեն բուժհաստատության խնդիրներից բխող առաջարկություններ և նախագծեր, ինչը միտված կլինի մասնավորապես բուժհաստատության շենքային և բուժաշխատողների աշխատանքային պայմանների բարելավմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի բուժօգնության սպասարկման որակի բարձրացմանը:

Արթիկ քաղաքում տեղի է ունենում բնակչության արտահոսք հանրապետության այլ մարզեր և արտերկիր: Այս հանգամանքը լուրջ խնդիրներ է առաջացնում՝ կապված սպասարկվող ազգաբնակչության թվաքանակի հետ: Արտահոսքը բերում է նաև աշակերտների թվաքանակի պակասեցման:

Ախտորոշիչ հետազոտությունները հիմք են հանդիսանում հիվանդության կանխատեսման և բացահայտման համար, այսինքն՝ հիվանդի մուտքը բժշկական հաստատություն ուղեկցվում է ախտորշիչ հետազոտություններով: Նմանատիպ ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ է համապատասխան տեխնիկական հագեցվածության ապահովում:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ (ՆԵՐԸ) ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

9.1. Ակնկալվող արդյունքներ

Ակնկալվում է, ժամանակակից բուժ. սարքավորումներով վերազինման, շենքային պայմանների բարելավման և բժշկական մասնագետների կատարելագործման արդյունքում հնարավոր կլինի ապահովել որակյալ բժշկական օգնություն և սպասարկում, որն էլ իր հերթին

կավելացնի հիվանդների, այդ թվում նաև վճարովի հիվանդների հոսքը դեպի ընկերություն, ինչն էլ կբերի եկամուտների զգալի աճ:

9.2. Զարգացման հեռանկարներ

<<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն ապահովում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պետական պատվերներիև վճարովի ծառայությունների իրականացումը :

Ընկերության առկա կարողությունները բավարար են ժամանակակից մակարդակի բուժօգնություն և սպասարկում իրականացնելու առողջության առաջնային պահպանման սպասարկվող օղակում:

Բժշկական գործունեության մեջ կարևոր չափանիշը որակյալ աշխատանքն է: Անշուշտ, որակի մշակված ծրագրերի հետագա ընդլայնումը ավելի հստակ է դարձնում յուրաքանչյուր բժիշկի կատարած աշխատանքը: Որակյալ աշխատանքը պետք է գնահատվի համարժեք վարձատրությամբ, և կկատարվեն համապատասխան միջոցառումներ և հարցը առաջիկայում կստանա իր լուծումը: Առողջության առաջնային պահպանման ծրագրերում բուժօգնությունը և սպասարկումը հասանելի ու մատչելի լինելով ամբողջ ազգաբնակչության համար՝ պետք է կատարվի ժամանակակից պահանջներին համապատասխան:Այս խնդրի կարևոր պայմանը ժամանակակից նոր սարքավորումներով և տեխնոլոգիաներով առաջնային օղակի համալրումն է: Այն կարևոր պայման կհանդիսանա կադրային ներուժի համալրմանը: Տեխնիկա-տնտեսական բազան համալրելով նոր որակյալ մասնագետներով, կրթական ծրագրեր իրականացնելով՝ հնարավոր կլինի կյանքի կոչել առողջապահության նախարարության մշակած չափորոշիչները որակյալ մակարդակով: Մարդկանց առողջության պահպանումը, վարակիչ հիվանդությունների կանխարգելումը, մահացության իջեցումը հատկապես մանկական տարիքում, կյանքի որակի լավացումը առողջ ապրելակերպի քարոզչությամբ յուրաքանչյուր բուժաշխատողի մասնագիտական պարտքն է, և այն իրագործելի է: Վերը մշակված ծրագրերը իրագործելի են առաջիկա տարիների համար: